Հավելված 1
Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի 24-ի N - Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի (այսուհետև՝ Համայնք) կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների հետ կապված հարաբերությունները և դրանց իրականացման կարգը:
2. Համայնքի կամավոր խնդիրներն այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքը ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
3. Համայնքի կամավոր խնդիրներն են՝
   1) Համայնքում գործող հանրակրթական դպրոցների գործունեությանն աջակցումը.
   2) Համայնքի Այնթապ, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին բնակավայրերի հեռավոր բնակելի տարածքներից դպրոցներ հաճախող աշակերտների համար մատչելիության ապահովումը.
   3) Համայնքի բնակավայրերից ուսանողների համար դեպի ուսումնական հաստատություններ մատչելիության ապահովումը.
   4) Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներից դպրոցներ հաճախող աշակերտների դասագրքերի վարձի փոխհատուցումը.
   5) Համայնքում գործող հանրակրթական դպրոցների վերջին զանգի միջոցառումներին համայնքի կողմից աջակցության տրամադրումը.

6) Դպրոցներից էքսկուրսիա մեկնող աշակերտներին տրանսպորտային միջոցներով աջակցության տրամադրումը.

7) Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառներում նվաճումներ ձեռք բերած անձանց և համայնքի զարգացմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերած անձանց խրախուսումը, աջակցումը և խթանումը կրթության, մշակույթի, սպորտի զարգացմանը"

8) Համայնքի բնակիչների անվտանգությունն ապահովելու նպատակով թափառող կենդանիների (շների) վնասազերծման և ստերջացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը.

9) Համայնքի վարչական տարածքում գործող Հայ Առաքելական եկեղեցուն և նրան հարող կազմակերպությունների հետ համագործակցությունը և աջակցումը նրանց գործունեությանը՝ ուղղված ժողովրդի հավատքին և հոգևոր վերելքին.

10) Ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը նպաստող տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ զանգվածային միջոցառումների կազմակերպումը.

11) Համայնքի ստեղծած հիմնադրամներին աջակցումը.

12) Համայնքի սոցիալական զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպություններին աջակցումը.

13) Համայնքի ղեկավարին կից կանաց և երիտասարդների խորհրդակցական մարմնի կազմակերպած միջոցառումներին աջակցումը.

14) Համայնքում գործող առաջնային բժշկական սպասարկման կազմակերպություններին աջակցումը.

15) Համայնքի 100 ամյակը բոլորած տարեցներին աջակցումը.

16) Համայնքում հասարակության կողմից ճանաչված, համայնքային կյանքին ակտիվ մասնակցություն ունեցած անձանց հոգեհանգստի արարողություններին համայնքապետարանի կողմից մասնակցությունը:

4. Համայնքի ղեկավարը կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորություններն իրականացնում է համայնքի բյուջեին, ինչպես նաև համայնքի զարգացման ծրագրերին համապատասխան:
5. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝
   1) Աջակցում է համայնքում գործող հանրակրթական դպրոցների գործունեությանը՝ հրատապ լուծում պահանջող խնդիրների առաջացման դեպքում տնօրենի կողմից ներկայացված աջակցության գրության հիման վրա՝ ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում.
   2) Ապահովում է Համայնքի Այնթապ, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին բնակավայրերի հեռավոր բնակելի տարածքներից դպրոցներ հաճախող աշակերտների համար դեպի դպրոց մատչելիությունը՝ տրամադրելով անվճար տրանսպորտային միջոցներ /համապատասխան ծախսերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է ավագանին/.
   3) Աջակցում է Համայնքի բնակավայրերից ուսումնական հաստատություններ հաճախող ուսանողներին՝ տրամադրելով անվճար ուսանողական ավտոբուսներ համայնքի ղեկավարի կողմից հաստատված երթուղիներին համապատասխան: Ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում.
   4) Փոխհատուցում է Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներից դպրոցներ հաճախող աշակերտների դասագրքերի վարձավճարը՝ համայնքում գործող դպրոցներից ներկայացված ցանկին համապատասխան գումարի չափով .
   5) Տրամադրում է դրամական աջակցություն Համայնքում գործող հանրակրթական դպրոցներին՝ վերջին զանգի միջոցառումների

անցկացման նպատակով՝ ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում.

6) Կարիքն առաջանալու դեպքում, աջակցության դիմումների հիման վրա, տրամադրում է դպրոցներին տրանսպորտային միջոցներ աշակերտներին Հայաստանի Հանրապետության տարածքում էքսկուրսիաներ կազմակերպելու համար՝ ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում .

7) Խրախուսում է կրթության, մշակույթի, սպորտի բնագավառներում նվաճումներ ձեռք բերած անձանց և սպորտի բնագավառում Համայնքի զարգացմանը նպաստելուն ակտիվ մասնակցություն ցուցաբերած անձանց՝ ավագանու կողմից հաստատված խրախուսման չափերին համապատասխան: Աջակցում և խթանում է կրթության, մշակույթի, սպորտի զարգացմանը՝ ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում "

8) Կազմակերպում է թափառող կենդանիների (շների) վնասազերծման և ստերջացմանն ուղղված աշխատանքներ ծառայությունն իրականացնող կազմակերպության միջոցով՝ ապահովելով համայնքի բնակիչների անվտանգությունը, ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում.

9) Համագործակցում է Համայնքի վարչական տարածքում գործող Հայ Առաքելական եկեղեցու և նրան հարող կազմակերպությունների հետ և աջակցում նրանց գործունեությանը՝ ուղղված ժողովրդի հավատքին և հոգևոր վերելքին՝ ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում .

10) Կազմակերպում է զանգվածային միջոցառումներ ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը նպաստող տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում .

11) Աջակցում է Համայնքի ստեղծած հիմնադրամներին՝ ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում.

12) Աջակցում է Համայնքի սոցիալական զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպություններին ավագանու կողմից ծրագրերի իրականացման համար ծախսերը հաստատելուց հետո.

13) Աջակցում է Համայնքի ղեկավարին կից կանաց և երիտասարդների խորհրդակցական մարմնի կազմակերպած միջոցառումներին ավագանու կողմից ծախսային ծրագրերը հաստատելուց հետո.

14) Աջակցում էՀամայնքում գործող առաջնային բժշկական սպասարկման կազմակերպություններին՝ ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում"

15) Համայնքի հարյուրամյակը բոլորած տարեցների տարելիցը շնորհավորում և աջակցում է ծննդյան օրվա առիթով՝ 100000/մեկ հարյուր հազար/ դրամի չափով"

16) Կազմակերպում է համայնքապետարանի կողմից մասնակցությունը Համայնքում հասարակության կողմից ճանաչված, Համայնքի զարգացման, համայնքային կյանքին ակտիվ մասնակցություն ունեցած անձանց հոգեհանգստի արարողություններին՝ ծաղկեպսակներով: Ծախսերը կատարվում են ավագանու կողմից հաստատված տարեկան բյուջետային ծախսերի ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում .

6. Կազմակերպում է սույն կարգի սահմանված կամավոր խնդիրների լուծումը՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով պետական, համայնքային, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ:

7. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է Համայնքի ղեկավարը՝ սույն կարգին համապատասխան, ֆինանսական միջոցների հատկացման չափի մասին ավագանու առանձին՝ համապատասխան որոշումների առկայության դեպքերում:

8. **Յուրաքանչյուր տարի կամավոր խնդիրների լուծման նպատակով Մասիսի** համայնքապետի սեփական լիազորությունների իրականացման համար կարող է ծախսվել տվյալ տարվա համար հաստատված Մասիս համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների ստացումների ընդհանուր ծրագրված ծավալի մինչև 5 տոկոսը:
9. Կամավոր խնդիրների լուծման իրականացման առաջարկություն կարող են ներկայացնել Համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները:
10. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է Համայնքի ղեկավարը կամ Համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը Համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր:
11. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը (այսուհետ՝ նախաձեռնող) Համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր:
12. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 11-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝
    1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ

նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է Համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում 5-օրյա ժամկետում նախաձեռնողին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 11-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում Համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը Համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում Համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 11-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը Համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները կարող է ավագանուն ուղղված դիմումի ձևով ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

14. Համայնքի ավագանին սույն կարգով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է, քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

15. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման

իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

16. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում են միայն ավագանու որոշմամբ :

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ